ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԲԽՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՌԱԶՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐՅԱՆ

Մեր ժամանակի միջազգային մակարդակով քննարկվող բազմաթիվ հարցերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում տնտեսական ինտեգրման հիմնախնդիրը, որը միաժամանակ նաև դարի հրամայականն է: Այդ գործընթացին ձգտում են մասնակցել աշխարհի գրեթե բոլոր երկրները՝ և՛ հզոր, և՛ միջին, և՛ թույլ զարգացածները: Ինչպես հայտնի է, «ինտեգրացիա» տերմինն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել XX դարի 30-ական թվականներին:

Ինտեգրացիան տնտեսական սուբյեկտների միավորումը, նրանց փոխներգործության խորացումը և նրանց միջև կապերի զարգացումն է[1]:

Միջազգային տնտեսական ինտեգրացիան առանձին երկրների խմբերի հատկապես խոր և փոխադարձ կայուն կապերի զարգացման օբյեկտիվ գործընթաց է, հիմնված միջպետական համաձայնեցված քաղաքականության վրա: Այդ գործընթացին ինտեգրված և նոր ինտեգրվող բոլոր երկրներն էլ ձգտում են ավելի մեծ չափով իրականացնել իրենց տնտեսական շահերը, ընդարձակել ազդեցության ոլորտները, ձևավորել նոր հնարավորություններ և այլն[2]:

Ցանկացած երկիր, որը ինտեգրվում է արդեն ձևավորված համաշխարհային տնտեսության համակարգին՝ Եվրամիություն, Անկախ Պետությունների Համագործակցություն, Եվրասիական տնտեսական միություն և այլն, հիմնախնդրին նայում է իր շահերի տեսանկյունից: Այդ սկզբունքով են առաջնորդվում նույնիսկ հզոր տերությունները, ուստի բնականոն հարց է ծագում, թե ինչպես կարող է ՀՀ-ն ինտեգրվել, օրինակ՝ Եվրամիությանը՝ առանց կորցնելու կամ սահմանափակելու սեփական տնտեսության ինքնուրույնությունն ու քաղաքական անկախությունը[3]:

Միջազգային մակարդակով ցանկացած տնտեսական համագործակցու-

---

[1] WWW. Science-education.ru.

[2] WWW. m-economy.ru.

[3] «21-րդ դար», թիվ 2 (4), 2004, էջ 52-72:

թյուն հենվում է երկու սկզբունքի՝ միջպետական տնտեսական կապերի օբյեկտիվ անհրաժեշտության և այդ կապերի զարգացման մեջ փոխադարձ շահագրգռության վրա: Սակայն, ճշմարիտ է նաև այն, որ արդի դարաշրջանում ցանկացած համակարգի հետ տնտեսական ինտեգրացիան պահանջում է համակողմանի մոտեցում, որովհետև այդ գործընթացն ունենում է տարբեր բնույթի հետևանքներ՝ թե՛ դրական, թե՛ բացասական:

Միջազգային տնտեսական ինտեգրացիայի դրական հետևանքներից են[4].

ա) երկրների միջև մրցակցության աճ,

բ) առևտրի ավելի լավ պայմանների ապահովում,

գ) նորագույն տեխնոլոգիաների տարածում,

դ) շուկայի չափերի ընդլայնում,

ե) ինֆրակառուցվածքի բարելավմանը զուգահեռ առևտրի ընդլայնում,

զ) գործազրկության կրճատում,

է) արտերկրից եկող գումարների՝ տրանսֆերտների կտրուկ աճ,

ը) աշխուժանում է գործարարների կապը և ներդրումների ծավալը,

թ) արդյունքում կարող է թուլանալ սոցիալական լարվածությունը:

Տնտեսական ինտեգրման բացասական կողմերից են՝

ա) «Ուղեղների արտահոսք», պրոֆեսիոնալների հոսք՝ հետամնաց երկրներից դեպի զարգացած երկրներ,

բ) ապրանքների գների բարձրացում, մասնակից երկրների՝ հզոր օլիգարխների, նրանց կորպորացիաների փոխպայմանավորվածության արդյունքում,

գ) արտադրության մասշտաբների մեծացումը բերում է տեղական ձեռներեցների ազդեցության կորստի,

դ) ազգագրական տեսանկյունից օպտիմալ կառուցվածքների խախտում՝ բնակչության ծերացում, տղամարդկանց թվաքանակի կրճատում, փեսացուների դեֆիցիտ, ամուսնությունների և ծնելիության կրճատում, ապահարզանների աճ,

ե) գյուղական բնակչության նվազում, որի հետևանքով մշակվող հողատարածքների կրճատում, կոռոզիա և դրանից ծագող բնապահպանական հիմնախնդիրներ,

զ) որակյալ աշխատուժի կորուստ, սեփական միջոցներով մրցունակ

[4] WWW. Science-education.ru.

մասնագետների պատրաստում այլ երկրների համար[5]:

Միջազգային տնտեսական ինտեգրման ժամանակակից գործընթացների ու նրանց հետևանքների համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գործընթացի արդյունքներն իրենց արտացոլումն են գտնում ոչ միայն տնտեսության, այլև սոցիալական, քաղաքական, մշակութային և կյանքի այլ ոլորտներում: Հեշտությամբ գայթակղվելով ինտեգրման հրաշալի խոստումներով, կամ էլ հրապուրվելով ապագայի նկատմամբ գեղեցիկ ակնկալիքներով, բնակչության շրջանում միշտ էլ ուժեղանում է միգրացիան ոչ միայն երկրի ներսում, այլև դեպի արտերկիր:

Հայաստանից դուրս եկող միգրացիոն հոսքերն ունեն երկու հզոր ուղղություն՝ Ռուսաստանի Դաշնություն և ԱՄՆ ու եվրոպական երկրներ, որտեղ հիմնականում ձևավորվել են նոր համայնքներ և պատրաստ են օգնելու իրենց հարազատներին ու հայրենակիցներին, մինչդեռ հին հայկական Սփյուռքը վերջին շրջանում օգնության հարցում երբեմն հապաղում է և մնում է ձեռնպահ: Դժվար է միանգամից գերագնահատել տնտեսական ինտեգրման դրական կողմերը՝ միաժամանակ անտեսելով նրա բացասական կողմերը, քանի որ այդ երևույթի հետևանքները բավական հակասական են: Չէ՞ որ գաղտնիք չէ, որ գործազրկության և այլ պատճառներով ուժեղանում է «ուղեղների», պրոֆեսիոնալ տարաբնույթ մասնագետների արտահոսքը Հայաստանից, որն իր հերթին բացասաբար է անդրադառնում երկրի թե՛ տնտեսության, թե՛ հոգևոր-մշակութային կյանքի վրա:

Որպեսզի մեր դատողությունները չմնան միայն աբստրակտ, այլ մասամբ նաև փաստարկված ու հիմնավորված, դիմենք ՄԱԿ-ի, Ռուսաստանի Դաշնության ֆեդերալ միգրացիոն, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ու որոշ այլ աղբյուրների օգնությանը: Համաձայն ՄԱԿ-ի՝ 2002 թ. հրապարակած զեկույցի՝ Միացյալ Նահանգներից հետո Ռուսաստանն օրինական և ոչ օրինական միգրացիաների քանակով զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը: ՄԱԿ-ի փորձագետների գնահատմամբ նրանց թիվը Ռուսաստանում կազմում է երկրի բնակչության 9%-ը՝ մոտ տասներեք միլիոն մարդ: Ռուսաստան մուտք գործող արտասահմանցիների 77%-ն ԱՊՀ-ից են, իսկ 10%-ը՝ Եվրամիությունից: Ռուսաստանի ֆեդերալ միգրացիոն ծառայության (ՖՄԾ) ղեկավար Կ.Ռոմոդանովսկու տեղեկատվության համաձայն (մարտ, 2006թ.)՝ Ռուսաստան աշխատանքի են գալիս քսան միլիոն

[5] WWW. Sociometr.am «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոն ՍՊԸ:

միգրանտներ, որոնցից տասը միլիոնը աշխատում է անլեգալ: Անլեգալների աշխատանքային գործունեության վնասը կազմում է երկու հարյուր յոթանասուն միլիարդ ռուբլի: ՖՄԾ-ի տվյալներով միգրացիան փոխհատուցել է Ռուսաստանի Դաշնության բնակչության բնական կորուստների 71%-ը: Նույն Կ.Ռոմոդանովսկու հաղորդմամբ 2013թ. հուլիսին Ռուսաստանում անօրինական ձևով աշխատում են ավելի քան 3,5 միլիոն արտասահմանյան քաղաքացիներ, որոնցից միայն 1,8 միլիոնն է աշխատում արտոնագրերով և թույլտվության իրավունքով: Իսկ ի՞նչ տեղ են զբաղեցնում այդ միգրացիոն հոսքերում մեր հայրենակիցները: Նույն աղբյուրների տեղեկատվությունները ցույց են տալիս, որ երկու տասնյակից ավելի ազգերի շարքում հայերը ռուսներից հետո զբաղեցնում են երկրորդ հորիզոնականը՝ 7,2%-ը[6]: Հետազոտությունները ցույց են տալիս, որ տարիների ընթացքում միգրացիան գնալով ոչ թե նվազում, այլ աճում է: Եթե 1989թ. Ռուսաստան արտագաղթած հայերի թիվը կազմում էր 532,390, ապա 2002թ. այն հասնում էր արդեն 1 130 491-ի, իսկ 2010թ. հայ միգրանտների թիվը շարունակում է աճել՝ 1 182 388 մարդ: Հետաքրքրական է նաև, որ արտագնա շրջանառու (ցիրկուլյար) աշխատանքի գնացողների 72,8%-ը կազմում են միջնակարգ և միջին մասնագիտությամբ, իսկ թերի բարձրագույն և բարձրագույն ու գիտական աստիճան ունեցողները՝ 18,4% մարդ: Ըստ ընտանեկան դրության գնացողների 29 %-ը չամուսնացածներ են: Փաստերը ցույց են տալիս, որ ըստ գործունեության ոլորտների՝ ամենամեծ տոկոսը կազմում են առևտրի համակարգում աշխատողները՝ 33,9%, շինարարության մեջ՝ 24,3%, կոմունալ ծառայությունների ոլորտում՝ 12%, իսկ տրանսպորտում՝ 10,2%: 2011թ. տվյալներով միայն Ռուսաստանում ապրող և պարբերաբար աշխատանքի մեկնող հայերը զգալի չափով գումարներ են ուղարկում Հայաստան՝ իրենց հարազատներին, որը կազմում է ընդամենը 2,5-3 միլիարդ դոլար, իսկ ՀՆԱ-ի՝ մոտ 20%: Իսկ ՀՀ պետբյուջեն հավասար է 2,5 միլիարդ ԱՄՆ դոլարի[7]: Կարո՞ղ են արդյոք այդ գումարները փոխհատուցել այն ահռելի վնասները, որ ծնում է տնտեսական ինտեգրման պատճառով բնակչության ուժեղացող արտահոսքը: Միևնույն ժամանակ պետք է նաև արձանագրել հետևյալ միտումը, որ հայկական Սփյուռքի ներկայացուցիչների բարեկեցության վատթարացումը կրճատում է տրանսֆերտների կամ ֆինանսական հոսքերի ծավալները, որը մեծ հարված է հասցնում ինչպես բնակչության ստվար հատվածին, այնպես էլ տնտեսությանը: Եթե մինչև 2006թ.

[6] WWW. m-economy.ru.

[7] WWW. Sociometr.am «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոն ՍՊԸ:

մասնավոր տրանսֆերտներն ունեցել են կայուն աճի միտում, ապա սկսած 2006թ.՝ հոսքերի դինամիկայում նկատվում է սեզոնայնություն, առաջին երեք եռամսյակներում՝ աճի, իսկ վերջին եռամսյակում՝ նվազման միտում: Սկսած 2008թ.՝ մասնավոր տրանսֆերտները կրճատվեցին շուրջ 25%-ով, իսկ 2009թ.՝ 30%-ով[8]:

Միջազգային տնտեսական ինտեգրացիայի հիմնախնդիրների, նրանց դրական և բացասական հետևանքների վերլուծության ժամանակ չպետք է մոռանալ մի հանրահայտ ճշմարտություն, որ մենք գործ ունենք տարբեր հարթությունների զարգացման ոչ նույն մակարդակներում գտնվող՝ ուժեղ, միջին և թույլ զարգացած երկրների հետ: Տնտեսապես զարգացած հզոր երկրները, աստիճանաբար իրենց շուրջը համախմբելով ավելի ցածր մակարդակի երկրներին, նրանց թելադրում են իրենց կամքը կամ խաղի կանոնները: Բնական է, որ ինտեգրացիայի սոցիալական հետևանքները նույն ձևով չեն կարող անդրադառնալ նորամուտների տնտեսության հետագա զարգացման, կենսամակարդակի բարձրացման կամ իջեցման, նրանց մոտ գործազրկության նվազման կամ բարձրացման հարցերի վրա: Չէ՞ որ արտադրության ավտոմատացման, կառավարման նոր տեխնոլոգիաների և ավտոմատ համակարգերի ներմուծման արդյունքում կրճատվում են աշխատողները, որն էլ իր հերթին լրացնում է գործազուրկների բանակը՝ էժան աշխատուժով: Այս ամենն ուժեղացնում է բնակչության տեղաշարժերը՝ հիմնականում արտագաղթի ձևով: Ինտեգրացիայի բացասական հետևանքները կարող են ուժեղ դրսևորվել նաև գործարար բիզնեսի աշխարհում, երբ տեղական ցածր և միջին ձեռներեցների արտադրանքը կարճ ժամանակում դուրս մղվի դրսից ներմուծվող ավելի շատ և էժան ապրանքների կողմից: Որքան էլ փորձենք մտածել իդեալական մրցակցության մասին, այնուհանդերձ կապիտալիստական հասարակարգում արժեք ունեցող բոլոր ապրանքները, ինչպես վկայում են Հոմանսը և Բլաունը, ենթակա են փոխանակման, սակայն համարժեք փոխանակում երբեք չի լինում. կողմերից մեկը միշտ շահում է, մյուսը՝ տուժում: Այս պարագայում հզոր կապիտալը շուկայից դուրս է մղում թույլին, իսկ դա մեզ համար նշանակում է նոր հիասթափություններ և արտագաղթի նորանոր ճամփաներ: Հայաստանի Հանրապետությունը միշտ էլ կարող է ինտեգրվել միջազգային տնտեսական կամ մաքսային կառույցներին, և անհարկի ընդդիմանալը մեզ համար հղի է աննպաստ պայմաններով, և ժամանակը չի ների մեզ մեր

[8] WWW.minfin.am ՀՀ ֆինանսների նախարարություն:

սխալների համար, նրա հետ պետք է համաչափ քայլել՝ հաշվի առնելով ազգի ընդհանուր շահը, և դրական ու բացասական կողմերի հաշվեկշիռը պետք է գնահատվի ռազմավարական նպատակների համատեքստում, այսինքն՝ ինչ-պիսի Հայաստան ենք ուզում ունենալ ապագայում: Դա խիստ կարևոր է, քանի որ Հայաստանի միջազգային վարկանիշը բարելավելու մեր ճիգերը բավական կասկածելի են երևում: ՄԱԿ-ի ազգագրական հիմնադրամի կանխատեսման ֆոնի վրա Հայաստանը գտնվում է կրճատվող ազգերի ցուցակում, դարա-վերջում կունենա 1,5-1,75 միլիոն բնակիչ: Ընդ որում ոչ բոլորն են լինելու հայ, որովհետև պարսիկներն աճում են շատ արագ, իսկ 90 000 եզդիները 85 տարի հետո նույնպես մեծ թիվ կկազմեն: Առաջնորդվելով օբյեկտիվության սկզբունքով՝ ակնհայտ է դառնում, որ մենք կարող ենք հայտնվել անհետացող ազգերի ցուցակում: Նշանակում է, որ տնտեսական աճի ապահովումը պետք է դիտվի ոչ թե լոկ տնտեսական մակարդակի բարձրացում, այլ որպես ազգի լինել-չլինելու ռազմավարական նպատակ[9]:

Նույն աղբյուրի կանխատեսմամբ 21-րդ դարի վերջում Եվրոպայի բնակչությունը 500 միլիոնից կիջնի 300 միլիոնի, ընդ որում բնակչության 30-40%-ը կլինեն ոչ եվրոպացիները: Նույն վիճակում կհայտնվի նաև Ռուսաս-տանը, որի բնակչությունը, հիմնականում ռուսների հաշվին, կնվազի 80 միլիո-նով: Ուստի Ռուսաստանի և եվրոպական երկրների ղեկավարները հստակ պատկերացնում են իրենց ապագան և տիեզերքի սև անցքերի նման ձգտում են ներառել արժեքային համակարգերը կիսող ազգերին և մշակում են կանխարգելիչ տարբեր ծրագրեր:

Տնտեսական ինտեգրման սոցիալական հետևանքների շարքում ան-հնար է չնկատել բնակչության ժողովրդագրական ծերացումը, մի գործընթաց, որն ավելի է արագացել հանրապետությունում հետխորհրդային տարիներին: Բնակչության ծերացումը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության, ինչպես նաև մեծ մասամբ միգրացիայի հետևանք է[10]:

Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչությունը կազմում է 7%-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացած, իսկ այդ

---

[9] WWW. Sociometr.am «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոն ՍՊԸ:

[10] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2013, էջ 17-45: Hayastani joghovrdagrakan joghovacu, 2013:

ցուցանիշը 2013թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում կազմել է 10,6%[11]: Այս ենթատեքստում ոչ պակաս վտանգ է ներկայացնում նաև ՀՀ-ում բնակչության ընդհանուր թվաքանակի կրճատումը: Եթե հավատ ընծայենք ՀՀ-ում կատարված մարդահամարների ու հատկապես 2011թ. հոկտեմբերի մարդահամարի արդյունքներին, ապա պետք է ընդունենք, որ 2013թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում ապրում է 3 026 900 մարդ, որն այնքան էլ իրատեսական չէ, որովհետև նրանց որոշ մասը վաղուց ապրում է այլ երկրներում ու, դուրս չգալով այստեղի գրանցումից, մնացել է Հայաստանի բնակչության հաշվեկշռում: Երբ համադրում ենք 1990, 2000 և 2013 թվականների բնակչության քանակն արտացոլող թվերը, արդյունքում պարզվում է, որ 1990-2000թթ. բնակչությունը կրճատվել է 3,514,9-3,226,9 =288 հազար, իսկ 200-2013թթ.՝ 3,249,5 -3,026,9=222,6 հազար մարդով, որոնց գումարը հավասար է 510,6 հազար մարդու: ՀՀ միգրացիոն ծառայության տեղեկատվության արդյունքների համաձայն՝ 2000-2013թթ. ընթացքում Հայաստանից արտերկիր մեկնողներից չի վերադարձել 346,6 հազար մարդ: Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն նույնպես հաստատում է, որ երկրի բնակչության թվաքանակի ցուցանիշի նվազումը միջմարդահամարային տասնամյակում (2002-2011թթ.) հիմնականում կատարվում է ի հաշիվ միգրացիայի, որը կազմում է շուրջ 320 հազար մարդ[12]:

Սոցիալական բացասական հետևանքների շարքում անհնար է անտեսել բնակչության «ծերացման» և թվաքանակի նվազման վրա ազդող այնպիսի գործոններ, ինչպիսիք են ծնելիության, մահացության, ամուսնության և ամուսնալուծության հիմնահարցերը: 2012 թվականին արձանագրված 43,288 հազար ծնվածների ընդհանուր թվաքանակից 42,480-ը կազմել են կենդանի ծնվածներ, իսկ 808-ը՝մեռելածիններ: Նախորդ տարվա համեմատ կենդանի ծնվածների բացարձակ թվաքանակը նվազել է 2%-ով: Բնակչության պարզ վերարտադրության համար տարեկան անհրաժեշտ է 2150 երեխայի ծնունդ, մինչդեռ 2012թ. ծնելիության գումարային գործակիցը կազմել է 1583 երեխա: Մահացության կառուցվածքում աստիճանաբար գերակշռում են արյան շրջանառության համակարգի հետ կապված հիվանդություններից (48,3%) և չարորակ նորագոյացություններից (20,3%) մահվան դեպքերը: Պատկերը հուսադրող չէ նաև ամուսնությունների և ամուսնալուծությունների համեմատական վերլուծության ասպարեզում: Փաստերը ցույց են տալիս, որ 1990թ.

[11] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2013, էջ 17-45:
[12] Նույն տեղում:

հանրապետությունում կազմավորված ավելի քան 28 հազար նոր ամուսնական զույգերի դիմաց ամուսնալուծվել են ավելի քան 4000 ամուսնական զույգ, իսկ 2012թ. այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կազմել են 19,063 և 3250 դեպք: 2011թ. համեմատ 2012թ. ամուսնության դեպքերը նվազել են 3,3%-ով, իսկ ամուսնալուծության դեպքերը աճել են 1,9%-ով[13]:

Այսպիսով, համաշխարհային տնտեսական ինտեգրման հիմնախնդիրների փիլիսոփայական, սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները բավական հակասական են, դրական կողմերով հանդերձ՝ հնարավոր չէ անտեսել բացասական հետևանքները, որոնք կարող են մեր ժողովրդի համար բախտորոշ դեր խաղալ, եթե պետությունը չդիմի կոնկրետ, որոշակի կանխարգելիչ քայլերի: Հաշվի առնելով իրենց երկրների ազգային շահերը՝ այդ սկզբունքով են առաջնորդվում նույնիսկ ամենազարգացած երկրները: Նման հարցերը մտահոգում են Ռուսաստանի Դաշնության նման հզոր երկրին, որի գիտնականները, վերլուծելով Ռուսաստանի տնտեսության մեջ ինտեգրացիոն պրոցեսների զարգացումը խոչընդոտող հիմնահարցերը, պետության ղեկավարներին առաջարկում են լուծել դրանք՝ կատարելով մի շարք համալիր միջոցառումներ: Կարծում եմ, ՀՀ ինտելեկտուալ ներուժը՝ հատկապես տնտեսագետները և սոցիոլոգները, համապատասխան կանխատեսումների արդյունքում, իրենց առաջարկություններով կարող են նպաստել սոցիալական, արտագաղթի և այլ բազմաթիվ խնդիրների կանխարգելմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է միջազգային տնտեսական ինտեգրման հիմնախնդրից բխող դրական և, հատկապես, բացասական հետևանքների ազդեցությունը ՀՀ տնտեսական, սոցիալական ու հոգևոր կյանքում՝ կապված միգրացիոն գործընթացների հետ: Առաջարկվում է տնտեսագետների և սոցիոլոգների կողմից երկրի ղեկավարությանը ներկայացնել առաջարկությունների մի փաթեթ, որը կարող է կանխարգելել բնակչության արտահոսքը և սոցիալական այլ խնդիրներ:

Բանալի բառեր - ինտեգրացիա, հետևանք, դրական, բացասական, սոցիալական, ՀՀ, միգրացիա, արտահոսք, փաստեր, տնտեսական:

[13] Նույն տեղում:

МЕЖДУНАРОДНАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ ИНТЕГРАЦИЯ И ЕЕ СОЦИАЛЬНЫЕ ПОСЛЕДСТВИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РАЗМИК СААКЯН, ГАЯНЕ АМИРЯН

Анализ процессов международной экономической интеграции показывает, что, будучи призванной служить общим интересам вовлеченных в этот процесс стран, интеграция имеет как положительные, так и отрицательные последствия, которые зависят от уровней их экономического развития. Причем слаборазвитые страны являются проигрывающей стороной, поэтому перед нашими учеными, особенно экономистами и социологами, для защиты национальных интересов РА ставится задача разработки такой стратегии и тактики интеграции, которые снизят риски отрицательных последствий, учитывая тот факт, что финансово-экономический кризис 2007-08 г.г. Армения перенесла в «мягкой» форме именно из-за отсутствия тесных интеграционных связей с мировыми рынками.

Ключевые слова - интеграция, результат, положительный, отрицательный, социальный, РА, миграция, отток, факты, экономический.

INTERNATIONAL ECONOMIC INTEGRATION AND ITS SOCIAL CONSEQUENCES IN THE REPUBLIC OF ARMENIA

RAZMIK SAHAKYAN, GAYANE AMIRYAN

The article analyzes the influence of positive and especially negative consequences evolved from international economic integration upon the economic, social and spiritual aspects of the life of RA citizens in connection with migration processes.

The author is of the opinion that Armenian scientists, economists and sociologists should put forward a set of proposals for precluding migration processes and solving other social problems as well to the Armenian government.

Key words - integration, consequence, positive, negative, social, RA, migration, outflow, facts, economic.